ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N_ ԳՇԲՕԿ-ԳՀԱՊԶԲ-19/5-2

ք.Գյումրի «27» մայիսի 2019 թ.

«Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ն ի դեմս Ռոբերտ Թորոսյան-ի, որը գործում է «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սենտրալ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արեն Զաքարյան-ի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

№ 194.
17.06.19

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 938 790 (ինը հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով

---

[1] Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված **պատասխանատվության միջոցներ**:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

---

[2] *Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի պառաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

---

3 Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը կիրառելի չէ:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ	*«Սենտրալ» ՍՊԸ*
ք.Գյումրի, Մազմանյան 3բ	*ք. Երևան, Եղվարդի 108*
ՀՎՀՀ 05500411	*«Ամերիաբանկ» ԲԲԸ*
«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ	*Հ/Հ 1570053215080100*
Հ/Հ 1150012424410100	*ՀՎՀՀ 00154817*
Տնօրեն Ռ.Թորոսյան	*Տնօրեն՝ Ա. Զաքարյան*
/ստորագրություն/	*/ստորագրություն/*
Կ.Տ.	*Կ.Տ.*

Հավելված N 1
27.05 2019թ. կնքված
ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

ՀՀ դրամ

Ապրանքի										Մատակարարում		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Հասցե	քանակ	ժամկետ
7	34331300	Ֆորդ Տրանզիտ մակնիշի ավտոմքենայի փոխանցման տուփի հոպաներ	HDE Autoteile Germany	Germany	ավտոմքենայի փոխանցման տուփի հոպաներ հավաքումի լրակազմ միանգամից տեղադրվող Մատակարարող պահեստամասերը պետք է լինի եվրոպական կամ համարժեք որակի արտադրության	լրակազմ	16500	16500	1	ք.Գյումրի Մազմանյան 3բ	1	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
9	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմքենայի առջևի կախոցի հարվածամեղմիչներ	AUTOSFEC	Latvia	առջևի կախոցի հարվածամեղմիչները Մատակարավող պահեստամասերը պետք է լինի եվրոպական կամ համարժեք որակի արտադրության:	հատ	23250	46500	2	ք.Գյումրի Մազմանյան 3բ	2	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
11	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմքենայի հետևի կախոցի հարվածամեղմիչ	AUTOSFEC	Latvia	հետևի կախոցի հարվածամեղմիչ Մատակարավող պահեստամասերը պետք է լինի եվրոպական կամ համարժեք որակի արտադրության:	հատ	15900	31800	2	ք.Գյումրի Մազմանյան 3բ	2	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
12	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմքենայի կցորդիչի հավաքածու	Stellox GMBH	Germany	ավտոմքենայի կցորդիչի հավաքածու տանող-տարվող սկավառակները մեկ տուփում Մատակարավող պահեստամասերը պետք է լինի եվրոպական կամ համարժեք որակի արտադրության:	լրակազմ	69000	138000	2	ք.Գյումրի Մազմանյան 3բ	2	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
13	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմքենայի հանդարտիչի ռետինյա ներդիրներ	BSG GMBH	Germany	ավտոմքենայի հանդարտիչի ռետինյա ներդիրները Մատակարավող պահեստամասերը պետք է լինի եվրոպական կամ համարժեք որակի արտադրության:	հատ	1500	12000	8	ք.Գյումրի Մազմանյան 3բ	8	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.

18	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի շարժիչի օդի զտիչ	Stellox GMBH	Germany	ավտոմեքենայի շարժիչի օդի զտիչ Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության:	հատ	3150	37800	12	ք.Գյումրի Մազմանյան 3բ	12	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
19	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի հետևի ցավկի առանցքակալներ լրակազմ	Ezet LLC	Russian Federation	հետևի ցավկի առանցքակալներ Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության:	հատ	16500	33000	2	ք.Գյումրի Մազմանյան 3բ	2	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
20	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի հետևի կամրջակի արգելակային կոռմեր	Stellox GMBH	Germany	հետևի կամրջակի արգելակային կոռմեր էլարով Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության:	լրակազմ	5500	33000	6	ք.Գյումրի Մազմանյան 3բ	6	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
22	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի առջևի հարվածամեղմիչի բարձիկ	Sat Brand	Taywan	առջևի հարվածամեղմիչի բարձիկ Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության:	լրակազմ	7500	45000	6	ք.Գյումրի Մազմանյան 3բ	6	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
25	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի առջևի ցավկի առանցքակալներ լրակազմ (աջ էվ ձախ)	Ezet LLC	Russian Federation	առջևի ցավկի առանցքակալներ աջ Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության:	հատ	15000	60000	4	ք.Գյումրի Մազմանյան 3բ	4	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
32	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի Առջևի կախոցի զսպահողակապերի հավաքածու	Stellox GMBH	Germany	Առջևի կախոցի զսպահողակապերի հավաքածու Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության:	լրակազմ	4800	48000	10	ք.Գյումրի Մազմանյան 3բ	10	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
34	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի հովացման մեխանիզմի էլեկտրական հովացուցիչ-լրակազմ հավաքածու	Stellox GMBH	Germany	հովացման մեխանիզմի էլեկտրական հովացուցիչ լրակազմ միանգամից տեղադրվող Մատակարարվող պահեստամասերը պետք է լինեի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության:	հատ	30000	30000	1	ք.Գյումրի Մազմանյան 3բ	1	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.

36	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի Շարժիչի չորս գոտիանի փոկ	Stellox GMBH	Germany	Շարժիչի չորս գոտիանի փոկ Մատակարարվող պահեստամասեը պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության	հատ	5745	11490	2	ք.Գյումրի Մազմանյան 3 բ	2	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
37	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի ցոլալամպ	Dialait Group	Russian Federation	ավտոմեքենայի ցոլալամպ հալոգեն լամպ H4 12V60/55W 3 կոնտակտ Մատակարարվող պահեստամասեը պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության	հատ	975	19500	20	ք.Գյումրի Մազմանյան 3բ	20	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
40	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի կայծամոմեր հավաքովի լրակազմ	NGK Iapan Co LTD	Japan	կայծամոմեր հավաքովի լրակազմը 1 տուփում 4 հատ առանց պնդօղակի թեք «իրիդիում» Մատակարարվող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության	հատ	2400	14400	6	ք.Գյումրի Մազմանյան 3բ	6	2-րդ, 3 րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
45	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի հետևի արգելակային սկավառակներ	Stellox GMBH	Germany	հետևի արգելակային սկավառակներ Մատակարարվող պահեստամասեը պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության	հատ	18000	72000	4	ք.Գյումրի Մազմանյան 3բ	4	2 րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
46	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի առջևի կախոցի հարվածամեղմիչնե րի գլխադիրներ	Sat Brend	Tayvan	առջևի կախոցի հարվածամեղմիչների գլխադիրներ Մատակարարվող պահեստամասեը պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության	հատ	7500	15000	2	ք.Գյումրի Մազմանյան 3բ	2	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
52	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի առջևի կախոցի անվաբացքի ռետինյա ներդիրների լրակազմի հավաքածու (մեծ եվ փոքր)	BSG GMBH	Germany	առջևի կախոցի անվաբացքի ռետինյա ներդիրներ Մատակարարվող պահեստամասեը պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության	հատ	6000	72000	12	ք.Գյումրի Մազմանյան 3բ	12	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
53	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի արգելակային կոճղեր առջևի	Stellox GMBH	Germany	արգելակային կոճղեր առջևի ABC-ի էլ լարեր	լրակազմ	6000	36000	6	ք.Գյումրի Մազմանյան 3բ	6	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.

«ՑԵՆՏՐԱԼ» «ЦЕНТРАЛ» «CENTRAL» 00154817

55	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի հովացման ընդարձակիչ տուփ	Ucel	Turkey	հովացման հովացման ընդարձակիչ տուփ Մատակարավող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության	հատ	8400	16800	2	ք.Գյումրի Մազմանյան 3ր	2	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
56	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի հովացման ընդարձակիչ տուփի կափարիչ	METALC AUCHO	Spain	հովացման ընդարձակիչ տուփի կափարիչ Մատակարավող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության	հատ	3000	15000	5	ք.Գյումրի Մազմանյան 3ր	5	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
58	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի ցոլալամպ մշուշային HW	Dialait Group	Russian Federation	սպիտակ ցոլալամպ մշուշային H11 12V55W պետք է ապահովի բարձր տեսանելիություն	հատ	1200	12000	10	ք.Գյումրի Մազմանյան 3ր	10	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
59	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի ղեկային հիդրոուժեղացուցիչ լրակազմ-հավաքածու	Sat Brend	Tayvan	ղեկային հիդրոուժեղացուցիչ	հատ	45000	90000	2	ք.Գյումրի Մազմանյան 3ր	2	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.
67	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմեքենայի հովացման ռադիատոր	Radiator	Turkey	հովացման ռադիատոր Մատակարավող պահեստամասեր պետք է լինի եվրոպական կամ նմանատիպ որակի արտադրության	հատ	33000	33000	1	ք.Գյումրի Մազմանյան 3ր	1	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակն երում մինչև 15.12.2019թ.

ԳՆՈՐԴ

«Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ
ք.Գյումրի, Մազմանյան 3ր
ՀՎՀՀ 05500411
«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1150012424410100
Տնօրեն՝ Ռ.Թորոսյան

/ստորագրություն/
L.S

ՎԱՃԱՌՈՂ

«Սենտրալ» ՍՊԸ
ք. Երևան, Եղվարդի 108
«Ամերիաբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1570053215080100
ՀՎՀՀ 00154817
Տնօրեն՝ Ա. Զաքարյան

/ստորագրություն/
L.S

Հավելված N 2
27.05.2019թ. կնքված
ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրական նացեել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
7	34331300	Ֆորդ Տրանզիտ մակնիշի ավտոմոբիլների փոխանցման տուփի ճոպաններ					4950	6600	8250	9900	11550	13200	14850	16500	16500
9	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների առջևի կախոցի հարվածամեղմիչներ					13950	18600	23250	27900	32550	37200	41850	46500	46500
11	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների հետևի կախոցի հարվածամեղմիչ					9540	12720	15900	19080	22260	25440	28620	31800	31800
12	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների կցորդիչի հավաքածու					41400	55200	69000	82800	96600	110400	124200	138000	138000
13	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների հանդարտիչի ռետինե ներդիրներ					3600	4800	6000	7200	8400	9600	10800	12000	12000
18	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների շարժիչի օդի զտիչ					11340	15120	18900	22680	26460	30240	34020	37800	37800
19	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների հետևի ցավկի առանցքակալներ լրակազմ					9900	13200	16500	19800	23100	26400	29700	33000	33000
20	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների հետևի կամրջակի արգելակային կոճղեր					9900	13200	16500	19800	23100	26400	29700	33000	33000
22	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների առջևի հարվածամեղմիչի բարձիկ					13500	18000	22500	27000	31500	36000	40500	45000	45000
25	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների առջևի ցավկի առանցքակալներ լրակազմ (աջ եվ ձախ)					18000	24000	30000	36000	42000	48000	54000	60000	60000
32	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների Առջևի կախոցի գնդաձողակապերի հավաքածու					14400	19200	24000	28800	33600	38400	43200	48000	48000
34	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների հովացման մեխանիզմի էլեկտրական հովացուցիչ-					9000	12000	15000	18000	21000	24000	27000	30000	30000

		լրակազմ հավաքածու													
36	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների Շարժիչի չորս գուտիաների փոկ					3447	4596	5745	6894	8043	9192	10341	11490	11490
37	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների ցոլայանվ					5850	7800	9750	11700	13650	15600	17550	19500	19500
40	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների կայծամոմեր հավաքովի լրակազմ					4320	5760	7200	8640	10080	11520	12960	14400	14400
45	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների հետևի արգելակային սկավառակներ					21600	28800	36000	43200	50400	57600	64800	72000	72000
46	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների առջևի կախոցի հարվածամեղմիչների գլխադիրներ					4500	6000	7500	9000	10500	12000	13500	15000	15000
52	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների առջևի կախոցի անվաբացքի ռետինյա ներդիրների լրակազմի հավաքածու (մեծ և փոքր)					21600	28800	36000	43200	50400	57600	64800	72000	72000
53	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների արգելակային կոնքեր առջևի					10800	14400	18000	21600	25200	28800	32400	36000	36000
55	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների հովացման ընդարձակիչ տուփ					5040	6720	8400	10080	11760	13440	15120	16800	16800
56	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների հովացման ընդարձակիչ տուփի կափարիչ					4500	6000	7500	9000	10500	12000	13500	15000	15000
58	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների ցոլայանվ մշուշային HW					3600	4800	6000	7200	8400	9600	10800	12000	12000
59	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների դնկային հիդրոուժեղացուցիչ լրակազմ-հավաքածու					27000	36000	45000	54000	63000	72000	81000	90000	90000
67	34331300	Ֆորդ Տրանզիտ ավտոմոբիլների հովացման տաքացուցիչ					9900	13200	16500	19800	23100	26400	29700	33000	33000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս

ԳՆՈՐԴ

«Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ
ք.Գյումրի, Մազմանյան 3բ
ՀՎՀՀ 05500411
«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1150012424410100
Տնօրեն Ռ.Թորոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մենտրալ» ՍՊԸ
ք. Երևան, Եղվարդի 108
«Ամերիաբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1570053215080100
ՀՎՀՀ 00154817
Տնօրեն՝ Ա. Զաքարյան

/ստորագրություն/
H.S